

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվանը 6 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

(Օտարաբարացիք զինում են ուղղակի
Միմյանի խմբագրատան մէջ:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նախը կերակուր և առաւօտեան):

Վայտարարութիւնը ընդունելու է ամեն լեզուով:

Վայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

Մեր բոլորները: Ներքին տեսչի խմբագրատան մէջ: Նախը կերակուր և առաւօտեան: Վայտարարութիւնը ընդունելու է ամեն լեզուով: Վայտարարութիւնների համար վճարում են խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

Մեր ԲՈՒՆԵՐԵՐԸ

Մեր ընտանեկան դաստիարակութիւնը պակասաւոր է, մեր միջնակարգ կրթութիւնը շատ կողմերից թերի է, ասացինք մենք մեր երեկվայ յոգութեամբ կարծում ենք որ մեր այդ ասածը պարզապէս անհրաժեշտ է: Մենք ի հարկէ համեմատելով ենք խօսում ուրիշ աւելի կրթված երկիրների հետ:

Մեր առնենք Գերմանիա, օրինակ: Ի հարկէ այնտեղ և ընտանեկան դաստիարակութիւնը և միջնակարգ դպրոցների մէջ սրտացկող ուսումը գերազանցում են մեր ընտանեկան դաստիարակութիւնից և մեր միջնակարգ ուսումից: Այնտեղ ի հարկէ, մարդը, բժիշկ լինի նա թէ այլ մասնագետ, աւելի միջոց ունի ընդհանուր կրթութիւն ստացած անձն լինել: Ինչհամար կրթութեան և մտաւոր զարգացման ստանալուն նպաստում է նոյն իսկ հասարակական կեանքի զարգացումը: Աւելորդ ենք համարում յիշել գերմանական ուսանողի մտաւոր բազմակողմանի զարգացմանը նպաստող թէ նրան շրջապատող հասարակութեան և թէ նոյն իսկ համայնքային կեանքի զարգացումը: Մեր ուսաց համայնքային շրջանի մէջ պատահող աղող հանգամանքները: Բժշկութեան ուսանողը միջոց ունի լայն բացի իր մասնագիտութիւնից և ուրիշ ընդհանուր կրթութեան առարկաների դասերը, հետեւի բազմաթիւ հրապարակական զարգացուցիչ դասախօսութիւններին, գտնվել ուսանողական ժողովների մէջ, որտեղ վիճաբանում են այլ և այլ թէ գիտնական և թէ գրական խնդիրների մասին, վերջապէս նա ունի իր ձեռքի տակ հարուստ մայրենի գրականութիւն, իր առջև ամեն

նորեայ հասարակական հարուստ կեանք, իր բազմաոտեսակ երեւոյթներով և այլն... Բայց ինչ որ գլխաւորապէս ուշադրութեան արժանի է, այդ գերմանական համայնքային բժշկական բաժնի սխառեման է, որ մի կողմից իր կազմակերպութեամբ նպաստում է ուսանողի մտաւոր բազմակողմանի զարգացմանը և միւս կողմից հետեւանք է հասարակական կեանքի պահանջման:

Բժշկականութիւնը սաստիկ ընդարձակ գիտութիւն է, որ քանի գնում է օրից օր աւելի և աւելի ընդարձակվում և ճիւղաւորվում է: Այժմեան ժամանակում մի մարդուն այդ գիտութիւնը ամբողջապէս ըմբռնելու համար հարկաւոր է մի կարգից դուրս հանձար լինել, իսկ հանձարները, ինչպէս յայտնի է, շատ քիչ են պատահում կեանքի մէջ:

Այդ ճամբարութիւնը գերմանական համայնքային վարուց է որ հասկացել է և մի երիտասարդ, որ բժշկականութիւն է սովորում, ընդհանուր բնագիտական և բժշկական հիմնական առարկաները ուսանելուց յետոյ, սահմանափակում է իր ուսումը բժշկութեան մի յայտնի ճիւղի մէջ միայն: Աւարտածներից մէկը դուրս է գալիս որպէս կանանց հիւանդութիւնների մասնագետ բժիշկ, միւսը աչքերի հիւանդութիւնների, երրորդը կաշուի հիւանդութիւնների և այլն և այլն: Այդ միջոց է տալիս ուսանողին մի կողմից հիմնաւոր կերպով ուսումնասիրել իր նեղ մասնագիտութիւնը, իսկ միւս կողմից ժամանակ է թողնում նրան իր ուսման ընթացքում իր գլխի մէջ հաւաքել և մարդկային գիտութիւնների ընդհանուր կրթողական մեծ պաշար:

Մեր ուսաց համայնքային շրջանում, զժառանգապէս ունեն դեռ այն պակասութիւնը, որ ուսանող բժիշկը պէտք է սովորի ամբողջ բժշկականութեան բոլոր ճիւղերը, ուրեմն պէտք է դառնայ բազմագէտ բժիշկ: Բայց որովհետեւ գիտութեան ընդարձակութեան և սարսափելի ճիւղաւորութեան պատճառով այդ անհարկն է, ուրեմն մեծ մասամբ բժիշկը թերի

կերպով գիտէ իր գիտութեան բոլոր ճիւղերն էլ և միւս կողմից ուսանող ժամանակ միջոց չունի ընդհանուր կրթութիւնն էլ ստանալու:

Այժմ հարցնում ենք. ո՞ր բժիշկը աւելի միջոց ունի հիւանդին լաւ բժշկելու՝ նա որ մի յայտնի ճիւղի հիւանդութիւններ է բժշկում միայն, թէ նա որ ամեն տեսակ հիւանդութիւններ է բժշկում, ինչպէս մեզ մօտ:

Թողնում ենք ընթերցողին պատասխանելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

23 յունիսի

Մեր թեմական դպրոցի հարցաքննութեան մասին ես նորա համար չէի գրում կարծելով, թէ արդէն ուրիշները գրած կը լինեն, բայց տեսնում եմ որ Երևանի նամակագրերից ոչ մէկն էլ ուշ չեն դարձրել, կամ միջոց չեն գտել այդ ցանկալի գործին: Թէպէտ բաւական ժամանակ է, որ հարցաքննութիւնները վերջացած են, այնու ամենայնիւ աւելորդ չեմ համարում ծանօթացնել յարգելի ընթերցողներին թեմական դպրանոցի անցեալ տարվայ ուսման, բարոյական և տնտեսական արդեանց հետ, որ տուեց մեզ ներկայ հարցաքննութեանց ժամանակ:

Երևանը ունի մի թեմական դպրոց, որ բաղկացած է մի նախակրթարան—պատրաստականից և երեք դասարաններից, աւանդուող առարկաները սորա են—կրթ, հայոց և ռուսաց լեզուներ, թուաբանութիւն, իրենաբանութիւն, բնագիտութիւն, ընդհանուր պատմութիւն, աշխարհագրութիւն, հայոց պատմութիւն, տարեկան երկրագագնութեան, վայելչագրութիւն հայոց և ռուսաց, ձայնագրութիւն և մարմնամարզութիւն: Հարցաքննութիւնները սկսվեցան մայիսի 22-ից և շարունակուեցան անընդհատ մինչև մայիսի վերջը: Յունիսի 10-ին հարցաքննութեան ձայնագրութիւնը միայն և վերջացաւ: Հարցաքննութեան առաջին օրը ներկայ էին նորին բարձր սրբազանութիւն թեմական առաջնորդը, մի երկու հոգաբարձուք և հասարակութիւնից մի քանի անդամներ: Եր ներկայ գտնվում, ոչ հոգաբարձուք և ոչ հասարակութիւնից մէկը, տեսուչը ինքն էր հարցաքննում միայն իրեն ուսուցիչների ներկայութեամբ: Պէտք է ասած որ հարցաքննութիւնները առհասարակ միջակ կերպով անցան, աշակերտները հայոց լեզուի, կրօնի և ընդհանուր պատմութեան մէջ միայն լաւ էին, իսկ մնացած առարկաների մէջ վատահամուտ եմ ասել, որ թող էին մասնաւոր ուսաց լեզուի և աշխարհագրութեան մէջ: Իրաւոր պատճառն էլ նա էր, որ մեր ուսուցիչները տարակց կիսով տեսչի վրա տրտունջ անելով դուրս եկան թողնելով ուսումնարանը անմիջապէս վիճակի մէջ, թէպէտ մի քանիսը ընդունվեցան բայց մի քանիսի տեղ նորերը վարձուեցան և այնպէս ուսման մի կողմը մնաց թող, դրա համար երկար խօսելը սեւեւոր է, որովհետեւ այն ժամանակ լրացրաց մէջ հրատարակվեցաւ մի առ. մի:

Տեսուչը առհասարակ շատ խիստ և անկողմնաւոր էր հարցաքննում: Յունիսի 9-ին տեսուչ պ. Սարգիս Բէգաւորանցը հրակրեց ժողովրդեան զալ իրեն տեսնու-

թեան երեք տարակց ընթացի մանրամասն հայտնելին ներկայ գտնվել: Մեզ յայտնի է որ յարգելի տեսչից առաջ այդ ուսումնարանը թէ նիւթապէս և թէ բարոյապէս ընկած էր, 60-ից աւելի աշակերտներ չէ կային ինչպէս կը վկայեն և հասարակութիւնը, բայց այժմ անի 215-իցի աշակերտներ և լաւ կառավարութիւն: Հրապարակները ժամը 9-ին ժողոված էին ուսումնարանի դասիճը որտեղ ներկայ էր և նորին բարձր սրբազանութիւնը: Տեսուչ պ. Սարգիս Բէգաւորանցը ոտքի վրա կանգնած շարունակ խօսեց ժողովրդեան առաջ ուսման առաջադիմութեան մասին, թէ ինքը ինչ պարտական է անելու, հոգաբարձուք ինչ պարտականութիւն ունեն, ուսուցիչների պարտքը ինչ է, ժողովրդեան պարտքը ինչ: Տեսուչը արդէն խօսքերով առհասարակ գրգռում էր ժողովրդին թէ վերին և թէ ստորին դասակարգին գոնէ ուսման համար ամենայն ինչ: Երկու ժամի չափ տեսուչը անընդհատ խօսեց միայն այդ մասին, իսկ հանդիսականները որոյց թուով և ես առանց ձանձարանալու լսում էինք այն ազդու խօսքերը: Խօսքը աւարտելուց յետոյ իրեն տեսչութեան օրից սկսած թէ բարոյական, թէ նիւթական և թէ տնտեսական դրութեան մասին մանրամասն հայտնելուց արդէն ժողովրդեան առաջ յայտնուեցաւ բոլոր հանդիսականաց երեք տարակց ընթացքում ուսուցչաց բացակայութիւնը, լսանք և ծովութիւնը: Երկրորդաց բացակայութիւնը, վարքը, ուսում և կրթութիւնը: Ինչպէս ասացինք թեմական դպրոցը բաղկացած է մի նախակրթարանից և երեք դասարաններից, ունի 215-ի չափ ուսանող աշակերտներ թողալիս որ և ճիւղավարժ. ունի 11,715 ռուբլ 25 կ. գում գումար, որը մի անսովոր երևոյթ է Երևանի համար, որովհետեւ Գ.այլմանան դպրոցը 86 թականից յայտնի դեռ չունի մի որոշ գումար, սրբազան առաջնորդը մաթեմատիկ յետոյ խնդրեց ժողովրդին և յառաջադիմութիւն այդ նախկին գործին, յայտնեց խորին հարկաւորութիւն իր, և բոլոր ժողովրդեան կողմից յարգելի տեսչին և հոգաբարձուք, դարձաւ օրհնեց ուսուցչաց լսանք ու յայտնեց որ իրենց աշխատութիւնը ոչ թէ միայն մի քաղաքի համար է, այլ բոլոր ազգութեանն է վերաբերում: Սրբազան հօր հազարդութեամբ մնալ—իսկ հետ և վերջացաւ այդ օրվայ հանդէսը: Ժամը 3-ն էր երբ ամեն մարդ գնաց իր տունը:

Յունիսի 16-ին կիրակի օրը կատարվեցաւ թեմական դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնը, ընտրութիւն անելու համար ամեն մի եկեղեցուց ժողովրդի կողմից պատգամաւորներ էին նշանակված: Սրբազան առաջնորդի ներկայութեամբ, պատգամաւորներին համաձայնութեամբ ընտրութիւնով, ընտրուեցան վերջապէս 6 հոգաբարձուք—առանցք են պ. պ. Վ. Բաղդասարյան, Վ. Բաղդասարյան, Բ. Բաղդասարյան, Բ. Բաղդասարյան, Բ. Բաղդասարյան, Բ. Բաղդասարյան:

Նշանակվել նորինսրի հոգաբարձուք, յունիսի 17-ը զալ տարի մեր ուսանող երեխայաց առաջ մի լայն և ընդարձակ ուսման առարկէլ պիտի բացուի յունիսի երեք հաւաք ուսուցչաց աշխատութեան չափ կը վարձաւորեն և կը բաւականացնեն նրանց նիւթապէս, որ նրանց կարողանան լաւ կառավարութիւն անել տնտեսական մասում, համոզուած ենք որ այն ժամանակ էլ արտունջ չի ու մեռել չի լինի և միանուազ կայանաւոր յառաջադէմ ցոյց տալ իրենց աշակերտաց զալ տարակց հարցաքննութեան ժամանակ: Մենք էլ վերջացնելով նամակը խորին շնորհակալութիւն ենք յայտնում տեսուչ պ. Սարգիս Բէգաւորանցին, հոգաբարձուք և մի քանի ուսուցչաց իսկ ինքն ջնուգնանք աշխատութեան համար:

ՆԱՄԱԿ ՔԱՐԿԱՆԱՐԱՅԻՑ

հաս 8—01 մարտի 25 յունիսի

Անդրադատ հեղինակները որ էին զարմուխը յետոյ ոչնչացնում են գիւղիս և իր չըջակացի կըծղած արտերը, կարկուտը երկու անգամ պակասորդ փնտրեց լրացրեց: Արտերը ընկած փնթուղիս մէջ են. չարուհակող անձրեւները արդէնք են լինում արտերից մնացածը. գոնէ հնձերու, ցնձերներ, պարսկաստանից եկած, վրէն են մեր կողմերում. նրանցից իւրաքանչիւրը անցեալ տարի օրական 2 ռ. վարձ և առաւօտ-իրիկու բրնձով փլաւ էր պահանջում, այն ինչ այսօր 30 կոպէկով անգամ կրկին բանացնող չը կայ:

Անձրեւների չարիքով խոնավութիւնը վերին աստիճանի է, գիւղերն ու ցուրտը այնքան խիտ է, որ յունիսի տեղ տիրում է մեր կողմերում կատարեալ մարտ ամիսը: Անասունների մէջ երկաց սպառիչ հիւանդութիւն: Առաւելագէտ հիւանդանում են կովերը: Հիւանդութիւնն յայտնի նշաններն են. անասունը առաջին օրում տխուր, ծանձրացած ոչնչ է ուտում: Փոքր յետոյ բերանից հոսում է լորձուկ, աչքերը կանգնում են, հիւանդը ճանաչողութիւնը կորցնելով լուծում է և այս ու այն կողմ ընկնելով հարու է տալիս հանդիպողին: Կան որոնք մեռնում են խելոյն, կան որոնք չարարւում են մինչև երկրորդ օրը, քչերը միայն 3, 4 օրից կամ աւելի մի չարթից յետոյ են մեռնում: Փորոտիքի մէջ աղբիւրներ գալարված, կրծքի մէջ և արիւնը սևացած է լինում:—Յուսահատ ժողովուրդը վճռեց անասուններին սուրբ վեղար կոչված ուխտատեղէն տանել, որ մատաղը, աղօթքը և օրհնած ճոռը փրկութիւն հասնի վարակիչ հիւանդութիւնը:—Այժմ ցար այնքան է ներգործում և մեռնողներին թիւը փոքրացել է:

Հոգեբանական միջոցառումներից վաղուց զրկված է համարում իրան մեր գիւղացիները: Սեր մօղնի հայրը ամենքին զգուշացրել է իր գէմ: Բոյս ունենը թէ ինքը Ղուկաս քահանայ Աթոռանից կը գտնի այդ բանի ելքը: Այն ինչ ճարահատեալ, չնփաճեանի տպարանում յայտնի գրաչար տիրացու պ. Սաքոբ ազգականները աշխատում են յիշեալ պարոնին քահանայ ձեռնադրել տալ մեր գիւղի վրա, որ և հարկաւոր խնդիր ու վկայականներ են ուղարկել կոնսիստորիան:

Քարվանսարայի նման մի գիւղին թէ որքան վայել է յիշեալ տիրացուն—այդ զիտէ ինքը կոնսիստորիան էլ, որի հիմունքով գուցէ կանի պահանջել տնօրինութիւնը:

Այստեղ լուր կայ, որ պ. Գ. Արծրունի կը գալ այս ամառ նաև մեր գիւղը այցելելու:

ՆԱՄԱԿ ՎԱՅԱՐԱՊԱՏԻՑ

18 յունիսի

«Մշակի» 87 համարի առաջնորդող յօդուածը պատեղի սև զգեստաւորների մէջ մեծ անհաւանութեամբ ընդունվեցաւ և ինչ կարծիք որ իրանց արդարացնելով, սկսեցին սկսանք ձեր լրագիրը:

A propos գրեմ և մի բաւականին հետաքրքիր լուր, որ այս քանի օրս է պատահել: Դիւարէքիւրի աղքատ եկեղեցու մի քահանայ կամենալով ստանալ հոգեբանական մի զգեստ, նստել է իր մէջ ձեռն վրա և 25 օր ճանապարհորդելուց յետոյ հասել է ա. Էջմիածին, որտեղ և գիւղի է վանքին այդ իր համեալ խնդիրներով, բայց ինչ կարծիք, որ վանքը ի նկատի ունենալով իր բռն և բիւրի աղքատ սպասարարների ծախսերը, որ այժմ պատերազմից յետոյ ընկած թանգութիւնների պատճառաւ տանապատուել է—ստիպված է եղել մերժել Դիւարէքիւրից եկած քահանայի խնդիրը: Չարահատեալ խեղճ քահանան ընկնում է զոհից դուռը հաց հաւաքելու համար և գիւղերով, բայց ընդունելութիւն չը գտնելով տեղւոյս հասարակութենից թողնում է սուրբ Էջմիածինը և գնում է Ալաշարակ, որտեղ նա կրկին ընկնում է զոհից դուռը որ գիւղերի և միւս օրը վաղ կրկին ընկնի ճանապարհ, բայց գիւղացիք չեն ընդունում չնայ և նա գնում է քահանայի տունը է որտեղ և գիւղերը անց կացնում, վաղը վերանայում խեղճը տեսնում է, որ իր ձին գողացել են գողից, որտեղ նա կապած էր տէր հօր ձիւն մօտ, որին գողերը ձեռք չեն տուել: Այժմ այդ քահանան վաղարշապատ է և սպանելով իր գործի վերջնապուն աւտու է: «Դիւարէքիւր ես աղքատ էի բայց ունէի յոյս և մի ձի, եկալ այստեղ և սուրբ Էջմիածինը զրկեց ինձ յոյսից, իսկ հարուստ աշտարակը ձիուց: Որհնով ձեր երկրից:

«Մշակի» 91 համարի մէջ տպած է վաղարշա-

պատից մի լուր, այդ լուրը այսպիսի է: Ահա ուղիղը: Մատանին վեր է առած ոչ թէ թանգարանից, այլ գահ ճարանից և երկու հատ որոնց պօսեցի աղքատ սպասարարը ստացել է իր նշանաւորներ օրը, որոնք տալու ժամանակը գնահատուցան 15-ական ռուբլի: Այդ մատանիները ինչպէս յայտնվում է պատկանում էին մեր նախնի և հին եպիսկոպոսներին և բացի այդ արժողութիւնից զընահատուել են 1000—1200 ռուբլ: Այժմ ձայն կայ որ այդ բաղդաւորը պիտի պահվի վաղարշապատի վանքի մայր եկեղեցու մէջ պէտք և այդ ընդգէմ է վանքի կանոններին:

Ահա երկու օր է, որ գիւղերն են անձրեւներ են գալի բայց արեւը կրկին չորացնում է հողը և թողնում ճանապարհները:

Մի համարի

ՆԱՄԱԿ ԲԱՆԱՆՑԻՑ

25 յունիսի

Անցեալ ապրիլի 16-ին Չարդախլուի հասարակութիւնը, շարունակ երաշտի վտանգից տարափած, մի խնդրագրով երկու մարդ զրկեց Սեանայ վանքի վանահայր արք. Կարապետ վ. Բուլբուլեանից, որ վերջինս բարեհաճէր Աւագ ս. Նշանը զրկել: Հասարակութիւնն ինդիքը կատարելով արք. վանահայր ս. Նշանը յանձնել էր վանքի միաբան մի վարդապետին, որը ճանապարհի մօտ գտնված մի քանի գիւղերին այցելելով, վերջապէս նոյն ամսի 24-ին հասաւ Չարդախլու: Գեռ ս. Նշանը ընդունելու ըստէն, երբ գիւղից մի վերապատի հեռավորութեան վրա երկու սեռի խուռը բազմութիւն ժողովված էր, այնպիսի յորդ անձրեւ սկսեց, որ մինչև եկեղեցի հասնելը ամբողջ մարմնով թրջուեցանք: Երկարատես երաշտից յետոյ անձրեւ տեսնելով ժողովուրդի ոգեւորութիւնը մեծ էր, հանդիսին ակնատես թափառական հարկաւոր տաճիկների զարմանքը անչափ: Չարդախլում ըստ արժանաւոր ընդունելութիւն գտնելուց և եկեղեցական հանդէս կատարելուց յետոյ, հետեալ օրը հայր-սուրբը ուղեւորվեց զէպի հարան գիւղերը, վերջիններս ցանկութեամբ համաձայն: Այնուհետև մինչև մայիսի վերջը բուսականին առատ անձրեւներ եկան և համարեալ չարթիքը երեք չորս անգամ, մայիսի 1-ին մորեխը արդէն մտել էր գիւղի ներքև գտնված արտերը:

Միջերը իրենց գործը դեռ անցեալ տարուայ սեպտեմբերից են սկսել, այնուհետև որ կողմ էլ անցելի, մկան որչեւի և անհամար հողակոյտերի կը հանդիպէր: Արտերը, համեմատելով անցեալ տարուայ արտերի հետ, շատ վատ են. աւերիչ միջերը հասկերը այնքան ազդարար են կտրում, որ տեսնողը ապշած կարծում է, թէ գիւղութեամբ է հնձած: Արտերը մեծ մասը առհասարակ զեղնի են տալի, երեկ արեւմտեքը միջերից վնասուած լինելու պատճառով: Չը նայելով, որ մորեխը գիւղի ներքև արտերը բոլորովին փչացրել էր արդէն, գիւղացիք դեռ են նրանից այնքան էլին սարսափում, որքան միջերից, որոնք, ինչպէս ասացի, անհամար խմբերով աւերում են արտերը: Բայց որքան ցաւալի էր տեսնել գիւղացի կանանց լաց ու կոծը մայիսի 26 ի պարզ արեւափայլային օրը ուղիղ կէսօրին, երբ մորեխը այնպիսի բազմութեամբ մըտաւ գիւղը, որ թուած ժամանակ զգալի ստուեր էր գցում գետնին: Այնթիւ մորեխի ստուերից մարդու աչք էր չփնթվում: Մորեխը մի քանի ժամից անցաւ արտերը, ու մի քանի օրուայ մէջ զգալի վնաս հասցրեց: Նոյն օրն էր մտել և մի ուղղութեան վրա գտնվող մի քանի գիւղերը, ինչպէս տեղեկացաւ ընկնելից:

Մայիսի 29-ին Չարդախլուից ուղեւորեցաւ Բանայ: Չարդախլուի քահանային հարցրի, ասացին, որ նա և երեսփոխանը գնացել են կոչա վանքը «միան հող» բերելու: Չարդախլուից մինչև Բանայը բոլոր ճանապարհը և չըջակացը մորեխով ծածկուած էին, որ հեռուցի կարմիր ծաղիկներով պատած էր թուած համարեա միայն բարոյականից պ. Միլլը-Ռոստոմանների կայանքում անհայտ տարածութեան վրա մորեխ չը տեսալ: Բանայցա Վերքի Հանդը անուանուած տեղը այս գարնան զարմանքի կանաչներ են եղել, բայց աւերիչ մեռ և մորեխը այնպէս փչացրել են, որ հետքերն անգամ չեն երևում:

Յունիսի 2-ին մի քանի ընկերներով գնում էինք Գանձակ, ուր գնալու համար երկու ճանապարհ կայ, մէկը մօտակալքում երեցած աւաղակներից վախենալով, ճանապարհները ուղղեցինք միւսով, որ անցնում է Բրաշուր կոչված գիւղով: Յունիսի սեան կիլիչ արեւի պաշտպանուելու համար հովանի ունէի պահած, չը նայելով դրան, Բրաշուր հանդու-

մը ճանապարհին երկու կողմում ձգուած հարթ դաշտավայրի ամբողջ տարածութեան վրա միայն մերկ գետնի տեսնելով, ակամայից կը գայի այն եզրակացութեան, որ ես ճանապարհորդում եմ ոչ թէ յունիսեան, այլ գեկուեմբերեան այնպիսի օր, որից արդէն մի քանի օր առաջ շարունակվող աւերիչ կարող են այսպէս մերկանալ ձիւնից արեւի հանդիպակաց դաշտավայրերը, եթէ յանկարծ գերմանացուց «Կանախլու» գաղթատեղիի կանաչազարդ այգիները հեռուցի չը պատկերանային իմ առաջ, և մտաբերել չը տային ինձ գարնան վերջը:

Փոքր ինչ առաջ մեր խմբին ընկերացաւ Միլլիկի գիւղացի մէկը, որին մորեխի մասին հարց առաջարկեցի: Գիւղացին պատասխանեց. «Էդ բոլոր բայց տեղերը, որ ճանապարհից վրա տեսար, մի աւիսառաջ զարմանալի կանաչներով ծածկուած էին. մեռել ներքեցի, մորեխը վերեցի էնպէս կերան, որ էսօր մի ծոցտ էլ չի մնացել, որ ըմամլա թէ ըրտատեղ (արտատեղ) ա ըլնք... Այս տարի ամեն կողմից մկան ու մորեխի աւերածներից զանաչատում են: Բոլոր գիւղացիներին ընդհանուր վնասութիւն և անարգութիւն է տիրում:

Չարդախլուից յօդու «Արար» ազգայնա ընկերութեան ժողոված գումարի նուիրատուների ցուցակում (որ տպված էր պատուական «Մշակի» № 26-ի մէջ) պ. Գարուիւն Մկրտչեան Մանասեանցի համար փոխանակ 3 ռ., սխալմամբ 3 ռ. 20 կ. էր տպած, որով գումարը 20-ից աւել կը լինէր իմ զրկածից: Երբ այդ ցուցակը կարդացի մի քանի մարդիկեանց մօտ, հասկացնելու, որ իրանց նուէրը տեղ է հասել, պ. Վարդախլու Մարգարեանցը նոյն նպատակով նուիրեց 2 ռ.:

Պ. Գարու Սաքաբեանը ներողութիւն խնդրեց: Հետաքրքրութենից չարթված ներողութիւն խնդրեց: Կատարեալ հարցրի: Պ. ասաց. «Երբ դուք այդ փողը ժողովում էիք, ես էլ արդէն ստորագրած և վճարած էի 1 ռ., Տէր-Ստեփանը ժողովուրդի մէջ այնպիսի մի դաւաճալ գցեց և բոլորին այնպէս հաւատացրեց, որ այդպիսի ընկերութիւն չը կայ, եթէ լինէր և հարկ լինէր նրան օգնելու, կատարութեան համար ինքնուր ինքն ժողովի այդպիսի գումարը և այնպէս համոզեց, որ ձեզ համար էք ժողովում դուք այդ գումարը: Տէր Ստեփանի խօսքերին հաւատալով, ուղեցի, որ գամ փողը յետ տանամ, միայն մի քանի մարդիկ չը թողեցին, ասելով մի քիչ սպասե՛ք: Այժմ չնորհալ եմ ձեր աղուութեան համար, խնդրեմ ներքէ իմ սխալմամբ և իմ ու եղբորս անհատով նորից նշանակե՛ք 2 ռ.»: Պարոնի առաջարկութիւնը կատարեցի, բայց խելոյն չը վճարեց փողը, որը և մինչև վերջը մնալով, իմ դուրս գալու օրը չը տեսալ նրան և մնաց: Պ. Աւաքեղեանի բացատրութիւնը տէր-հօր վարմունքի մասին աւելորդ էր, որովհետև նրա լին հոգեւ տէր լինելը ինձ վաղուց է յայտնի: Մտադիր էի նորից հանգամանակութիւնը բանալ, բայց, արեւմտ մի քանի դառը հանգամանքներ չը ներքեցին ինձ թէ այդ բանը կատարել և թէ նամակիս բովանդակած տեղեկութիւնները ժամանակին հաղորդել: Ներկայ նամակիս մէջ ներփակած կը գտնէք պ. Մարգարեանի նուիրած 2 ռ. որը խնդրեմ ներողութիւն կրէք հասցանքի ուր հարկնէ: Մեծացոյս եմ, մեծապատիւ խմբագիր, որ մի անկիւն կը շնորհէք նամակիս ձեր պատուական թերթի մէջ:

Ստեփաննոս Տէր-Միլլիկեան:

ՆԱՄԱԿ ՉԱՐԴԱԽԼՈՒՆԻՑ

22 յունիսի

Գիւղիս «Ս. Սահակեան» ուսումնարանի ուսուցիչ պ. Տէր-Միլլիկեանը անցեալ մայիսի 29-ին թողեց մեր գիւղը: Թող ներվի մեզ պարոնի հեռանալու պատճառը կարճ ի կարճոյ հաղորդել ընթերցողին: Չարդախլուից անցեալ տարուայ մի քանի ճանապարհներով Չարդախլուից տպած 2. ստորագրութեամբ նամակներ, որոնք անխնայ հարկվածում էին մի քանի աղաների և մի տիկնի, վերջապէս ոտքի կանգնեցրին վերջիններս վրէժ առնելու: Այդ աղաները ժողովում, խորհուրդ են անում անպայման զանելու, իրանց սև մաղձը գլխին թափելու, սրա նրա պոչից են բռնում, վերջը հասկանալով համոզվելով, որ գիւղում ուրիշ գրող չը կայ, կուծն ու կուլեն խեղճի գրելին են կտրում: Թէ իմ կողմից ես էլ չատ անմեղ չեմ ճանաչում պ. Տէր-Միլլիկեանին այդ նամակների վերաբերութեամբ, սակայն ճշմարտը պէտք է խոստովանեմ, որ նա իր բոլոր ընթացքում այդպիսի պակասութիւն չունեցաւ, որ խաղաղ հարձակում լինէր առեւել: Նրա ամենամեծ պակասութիւնը, որ նրան բնական էր, խնայեւ ե-

րեսին սանին էր, որը մեր ժողովուրդի համար անտանելի բանէ: Մեր աղաները, գործին մի քիչ կանոնաւոր ընթացք տալու մարդով, ամենայն պատրաստակամութեամբ սպասեցին մի պակասութիւն գտնելու ուսուցչի կողմից, որ իրանց դժոխային չարութիւնները թափեն, բայց տեսնելով, որ նպատակը չէ յաջողվում իրենց, աւելի ու աւելի կատաղած սկսեցին իրենց բարոյական ոյժը—զըրպար տուէր իւր չը գործադրել, ատելութիւն սերմանելով նրա և նրա անկեղծ յարգած բարեկամների մէջ, իր թէ առաջինը անբարոյական յարաբերութիւն է ունեցած վերջինների ընտանեաց հետ և հազարաւոր բաներ...

Պ. Տ. Մ. Նը սկզբում հաւատ չէր ընծայում, թէ աղաները իրան վնասելու համար այդպիսի միջոց կընտրէին, բայց տեսնելով, որ չարութեան հորժոն հետզհետէ կործանում է սիրոյ չը լինածը, յուսահատված հրաժարական է տալիս տեսչին: Չարահաւան խմբից շուտ խոյս տալու համար, հոգաբարձութեանը խնդրում է, որ իրանից դանդաղան տեսչին, խնդրելով քննութիւն բանալ: Հոգաբարձութիւնը այդ խնդիրը մերժում է, բայց յետոյ սաստիկ թախանձանացը զիջանելով համաձայնութիւն է: Պ. Տ. Մ. եւս խնդրելով ինքը իրանից զըրում է և յանձնում հոգաբարձութեան, որ զրկէ ում հարկնէ: Մինչև խնդրի հարկաւոր պատասխան տրամալը, հոգ. անդամ արք. Մակար ք. Տէր-Ստեփանեանը անձնական գործերով գնում է Գանձակ, ուր ներկայանալով տեսչին, բոլոր եղբուրթիւնը բացատրում է: Մեծ. տեսուչը գործի էութիւնը խոր թափանցելով, աւելորդ է համարում այցելել, ուսուցչի կրակներին է թողնում մնալը ու չը մնալը, նայելով հանգամանքին: Ուսուցիչը խոր խոցված լինելով չարագրիւ ամբողջ զրահայութիւնից, տեսչի գրութիւնից անմիջապէս մի քանի օր յետոյ, մայիսի 29-ին թողում է գիւղը:

Հաւատալով, պ. Տ. Միլլիկեան, որ մեր հասարակութեան արածը քիչ է, դու ես մեղաւորը, քեզանից ներգալի: Այլը դու ձո՛ւ ես է՛ք, որ աղան եւ իր դէմը համարակալում ես: Միթէ խոհմուտիւն կը լինէր, եթէ գրէիր, թէ մի եռալարի պատուով ընկնում է մի մեծագուշակ, հաստափոր աղա, որ հինգ տարի է պահում է ապօրինի կին, որին օրինաւոր կինը կատարեալ գերի է, ստուգել է կամ թէ այդ հաստափոր աղան ազգաբնակչան զիմակը երեսին առած եկեղեցու 200 ռուբլ երկու տարի անտուկս վայելում է: Յիմարութիւն չէր լինի, եթէ գրէիր ապօրինի տիկնիւն Լուսաւորից օրը (մեծ պատիւ) ներողութիւն համարելով փոքր ինչ սպասել, որ ժամանակին խոստովանվի, զայնացած գնում է տուն ու կատարի կեցույթը հայոցում քահանային ու նրա տունը հարողին... կամ թէ մայիսի 27-ի գիւղիկայ անցքը գրէիր, որ գաւառական պրիտաւը իր ընտանիքով ինչպէս էր այդ պալատում, տանտիրէն եղբոր անխնայ ծեծել տուեց այնքան, որ գլուխը բնից հաստացել էր և թէ ինչ պատճառով էր... կամ թէ խօսելով Տէր-Ստեփանի մասին ասէիր. «Տէր-Ստեփանը հայ վարդապետին պօպոզով (փեղաք) հայոցում և գիւղից խուկում է:» Երբ պ. Ս. Տէր-Միլլիկեանը «Արար» ընկ.» համար նուէր էր ժողովում, ժողովուրդին արգելում էր նուիրատուութիւնը, բայց ուղիղ երկու օրից յետոյ լսեցինք, որ Դարաբաղի աշուղ ուսուցի Աղամը եկել է, և Տէր-Ստեփանի տանը լաւ հեքաթն էր պիտի ասի երեկոյան: Տէր-հայրը մարդկեանց կանչել էր, որ ուստին փող բախեն. ամենից առաջ ինքը մի բուրջ տալիս է և խնդրում է, որ ամենքն էլ բուրջներ բախեն, մի հինգ բուրջ մէջ ուղիղ 10 ռուբլ 50 կոպէկ է ժողովում... Տէր-հայրը իր տիրացու Բովհաննէս Դանապարեանից 10 ռուբլ կապած է առել, որ... Չատիկ կիրակի օրը «Ոսկան նահապար» ուխտատեղում մի ձոխ հացիկերով ժամանակ տէր-հայրը մի գէգաբեցիկ տղայի հայհուլուց յետոյ, խեղճի գլուխն էլ պատառեց, երեսն ու չորերը արեւմտեքի արաւ, այս անցքին ներկայ էին Դանապարեան հինգ քահանայ և հազարաւոր այն նախ ու թուրքը: կամ թէ սկսելի իմար—իմար դուրս տալ մեր տանուտէրի վրա, թէ այս տարի գինեւան իրաւունքը միայն մի մարդու տուին, որից 900 ռուբլ ստացան. տանուտէրը մինչև 10 ռուբլ չառաւ, պայմանագիրը չը ստորագրեց... Տանուտէրը ինչքան տուգանք է առնում, ինքն է ուտում, տո՛ւ անաբանը, է՛ք որ խեղճը մի տարվայ մէջ 7 ռ. 80 կ. չէ տուել ուսումնարանին... Գրէիր նոյնպիսի թէ մեր հարեան գիւղերի տանուտէրերը յունիսից փրկվել են, բայց մեր պատուելի մինչև օրս չէ բարեհաճում դուրս գալ պաշտօնից, այլ բարեկամներին խնդրում է, որ նոր ընտրութեան ժամանակին էլ իրան պահեն. ասելով «ես մեռակ մարդ եմ, ինձ ստաքլին զրկե՛ք, տունը քանդվեց, մեծ քանդվիր էս ժամանակ կը լինի, որ ինձ պաշտօնից հանեն...»

Այսպիսի յիմարութիւն անողները իրանք են ի-

բանց հաղածում, անբարոյականացում, խեղճ հասարակութիւնը կամ արաները ինչ մեղաւոր են...

Տեղացի

ՂԱԶԱՆԻՑ մեզ գրում են. «Երբեք կուր գետի ափից վեր չը բարձրացաւ, այլ թեւաւորվելուց յետոյ Գանձակի կողմը թռաւ: Երաշտը չորացրեց չալայ անտառնայած տեղի արտերը, բայց վերջին ժամանակ եկած առատ անձրեւները միւս տեղերը կանաչով զարդարեցին»:

«Тифл. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ Պալատի մօտ, թփի տակ գտել են մի սպանած նորաժին մանուկ, մէկ ուրիշն էլ Ալէքսանդրեան այգիում են գտել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻԱ

Այս օրերս Մարդիգի լրագիրները մի արեւտայի դէպք էին նկարագրում. պատմում են, որ զորահանդէսից յետոյ, Թուրանոթանիզ զօրքերի վերադառնալու ժամանակ, Պուէրտագէլ Սօլ անտառնայած տեղը, վառօդի մի արկը յանկարծ պայթեց: Այս դէպքից 18 մարդիկ ծանր կերպով վիրաւորվեցան, իսկ մի զինուորստացած վերջից իսկոյն մեռաւ: Պայթելու պատճառը նրանով են բացատրում, որ իբր արկի միջոցով մէկը ընկնելով փողոցի մէջ գտնված տրանվուայի գծի խորութիւններէ մէկի մէջ, դէմ է ընկել և արկը դուրս թռչելով իր տանակից շփվել է փողքի երկաթի թիւրին, և այդ շփումից առաջացել է կրակ, որը նիւթէլ է այդ չափերը:

Եթե ճորինքի խրանքը նոր թշուառութիւններ էր սպառնում, բայց բարեբաղդաբար նրանց կարողացան իսկոյն կանգնեցնել: Պայթելու պայտէս սաստիկ է եղել, որ մերձակայ խանութներէ շատերը շատ թէքի վնասվել են:

Երկուրդ այնպէս սարսափելի է եղել որ պօլիցիականները այդ պայթիւնի մօտ դըստնված բաւական տարածութեան վրա շատ իրիզներ գտան, ինչպէս օրինակ ականջի օրեր, ապարանջաններ, հովհայներ և մինչև անգամ փողեր, որոնց կողքերէ էր հասարակութիւնը իրանց վաստակն տալու պիտի մնան: Երկուրդ մօտ եօթը ժամին թաս դուրը բազմաթիւ երեւելի անձնաորութիւնների հետ միասին գնաց հիւանդանոց պցելու վիրաւորվածներին:

Բալարայի իշխանը և Աւստրիայի աւագ դուքսը, որոնք մի քանի օր է որ գտնվում էին Մարդիգում, ուղևորվել են Արանջուէն: Այդ տեղից վերադառնալուց յետոյ, նրանք իսկոյն կուղևորվել դէպի Բարթաղէն:

Ֆինանսների մինիստրը չուտով բնագէտը կը ներկայացնէ կորստէսին: Մուսթը և ծախսի մէջ ունէլ փոփոխութիւն չը կայ: Հասարակական պարտքերը դեռ չեն նստադրում:

Սէնատի անցեալ նիստերից մէկում ներքին գործերի մինիստրը ժողովի ուշադրութիւնը դարձնելով նիւթի խանութի եղեռնագործութիւնների վրա, ասաց որ ժողովի պարտանկանութիւնն է կառավարութեանը օյժ և պաշտպանութիւն տալ:

Գեներալ Մարտինէց-Կամպօս մինիստրական տաղմալի վերաբերութեամբ մի քանի մանրամասնութիւններ հաղորդեց, և յայտնեց որ այս տաղմալի վերաբերութեամբ նա բոլորովին համաձայն է պ. Կանտալի կարծիքի հետ: Նա յայտնեց, որ իր մինիստրութիւնը հիմնված է խաղաղութիւնական սկզբունքի վրա, և որ նա բոլոր իր ժամանակը գործ կը դնէ միայն վարչական բարեկարգութիւնների վրա, յիտոյ նա կը զբաղվի Կուբայի շահերով: Պ.

Մարտինէց-Կամպօս վերջացնելով իր խօսքը, ասաց, որ ստրկութեան անմիջական ոչնչացումը առ այժմ անհնար է. դրա համար պէտք են նախապատրաստական միջոցներ յետոյ, վերջացնելով իր խօսքերը, պ. մինիստրը ծափահարեց պատգամաւորներին խաղաղասիրական մտումները, ասելով որ նրանց այս զիտաւորութիւնները ապացոյց են նրանց վարչական հանձարի:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Երգում, 8 յունիսի

Կարին այս օրերս յառաջագիմական ընթացքով մը կարծես թէ նշանակութիւն կ'առնուէր շայտտանի մէջ ուսումնասիրաց ընկերութեան օգտակար կերպով յարատեւութիւնը, ուսումնահոգաբարձութեան մը կազմութիւնը և 2000 ուսանող մանկաւոյն դաստիարակութեան և կրթութեան մասին անդու աշխատութեամբ շարունակութիւնը, Ազգ. մայր և ընկերական, վարժարանաց նոր ծրագրով մ'ալ աւելի կանոնաւորութեան որոշումը գեր. Ս. Առաջնորդին և Ազգ. Հայրենասէր Յանձնախմբին, որ 'ի մասին բարենորոգմանց բարձր-Հայոց գեր. Վահան վարդապետի հետ համաձայնութեամբ փոխեռանքն անձանձիր գործունէութիւնը, Թարեբական ընկերութեան կազմակերպութիւնն ու մեծ անձնութեան և ուսնով թատրոնին հաստատութիւնն ու տեւողութիւնը կը հաստատեն, թէ Կարին արդարեւ աշխարհագրապէս Հայաստանի սիրտն ըլլալով, Հայրենաց հողին ևս իւր մէջ ունի, այս ամենուն վրայ յաւելու նաեւ այն շքեղ հանդէսը, որ ազգ. սահմանադրութեան 19-րդ տարեդարձի առթիւ մայիս 27-ին առաջին անգամ տեղի ունեցաւ բազմաթիւ մէկ ժամ հեռի Լուսաւորի վանուց մէջ: Սոյն հանդէսին ճշգրիտ նկարագիրն ընելու պարտք կը համարիմ, որ ոչ նուազ ուրախութիւն պիտի տայ անշուշտ այն ամեն Հայերուն, որք Հայրենիքէ դուրս կ'ապրին և առ մեր նորա փառաց կը խորհին և կը գործեն: Ժամը երկուքին գեր. Ս. Վահան վարդապետ հանդէսը բանալով 'ի բեմէ խօսեցաւ հանդիսականաց և ողջունեց զՀայաստանեաց յանուն Թիւրքիոյ այն Հայոց, որք թէ և պանդուխտ և տարաշխարհիկ, այլ միշտ կողովողակն կըլծան համբուրել Հայրենի հողը, ապա յաւել տուք Կարինեցիք, և դուք ու ամենայն Հայաստանայք, դուք աղիւս ազգի մը սերունդն էք, դուք սերեցիք Հայրենիքը ամեն տաղմալներու: Վերտու և զարհուրելի հալածանքի մէջ, դուք մեր Հայրենի աշխարհը ձեր արիւնքով որդիցիցիք, և այդ տրտաւուաց և արեան ծովու մէջ միայն խաչ մը ունէլք, որուն կըլծում կը յուսնիք և կ'ապրէլք, բայց այսօր ժամն եկած հասած է, ժամ փրկութեան: Դուք զձեզ պիտի փրկէք, զի ձեր արդէլ այդ շաւիղը փրկութեան կը տանի, գործեցէք ուրեմն, զգատ և խօհեմ գործեցէք, դուք պիտի յաղթանակէք, ինչպէս յաղթեցին ձեր նախնիքները և Հայ ազգայնութիւնը այս լեռնաբուն և գաշտերուն մէջ Կենդանի պահեցին. դուք իրով Հետեւ փրկութեան կը հաւատար, և թէ ով որ իր ձեռնարկիւ գործին յաջողութեան վրայ կը հաւատայ, կը հասնէ նրա արատիկն, դուք ևս պիտի փրկուիք, քանի այդ սուրբ հաւատով գործէք, և ձեզ հետ Բարձր-Հայաստան պիտի բարձրանայ և լինի ազատ, անխախտ և փառաւորանք: Յետոյ դաշնամուրին ձայնակցելով երգեց Ազգ. մանկան, մինչև 'ի բեմ կ'աւ մեծ: Մերտիչ էջէնտի Պալարեան, և զեղեցիկ խօսեցաւ և քանիցս իւր ատենախօսութիւնը ընդհատեցաւ: Բուռն ծափահարութեամբ և կեցցէներու աղաղակաւ և ապա յաջորդեցին իրարու ետեւ ուրիշ անձնաւորներ լեռնաբուն, որոց վերջինը մեծ. Յովհաննէս էջ. Ս. Մելիքեան Կարնոյ անցնելով վրայ անխոր ձգելէ յետոյ յաւել. «առ դաշտին մէջ 5000 զեղծուէ Հայմանկոյ կայ,

ունենէր երեք վանքեր, կ'առաջարկեմ որ այս երեք վանքերը միացնելով միոյն մեջ բացուի մէկ դպրանոց 40 ուսանողներու համար, այդ վարժարանն ունենայ նիւթականին միայն քաղաքացին թող տարեկան բաժանորդագրութեամբ նպաստէ, այն ատեն հինգ տարիէն կարելի կը լինի այդ գիւղերու մէջ վարժարաններու գոյութիւնը և սոյն առաջարկը ընդունուեցաւ հանդիսականներին և անմիջապէս 150 բաժին (75 ոսկի) ստորագրուեցաւ և ժամը վեցին 200 հանդիսականք 'ի սեղան նստան, ուր առաջարկութեամբ մեծ. Համադրասպէսէնտի Պալարեան բաժակ առաջարկուեցաւ վասն կենաց վեհափառ Սուլթանի, բայց Ամեն. Ս. պատրիարք չօր անուր երբ հնչուեցաւ, ոչ էթէ միայն սեղանաւ կիցներուն այլ հազարաւոր ժողովուրդան կեցցէներու աղաղակը դղրեցցին Կարնոյ լեռները, ապա վասն կենաց գեր. Ս. Առաջնորդին վեհ. սեմ. Աղաբէկեան եղբարց և մեծ. Գրիգոր էջէնտի Շապանեանի, որք հոն սեղանակից էին, և կարնեցի այն Հայրենասէր երկասարքազ, որք հանդիսին պատրաստութեանն ու շքեղութեանը անդու աշխատած էին բաժակ առաջարկուեցաւ, և ապա ժամ 9-ին հանդէսը վերջացաւ օրհնութեամբ գեր. սրբազան Հօր: Սոյն հանդէսին մէջ Հակահատուենաց կողմէն նորկայացուցիչ էր մեծ. Տօթօր Թաւրութիւն էջէնտի Ալլահբեկեան—էջբիւնեանց, որ իւր արհեստին հմտութեամբ ազգին շատ ծառայութիւն մատուցած է, մանաւաղ անտէրունչ աղքատաց, ճիւղաբար խընամելով և դեղորայք տալով, և իւր եղբայրը մեծ. Միքայէլ էջէնտի, որ ուսումնական և Հայրենասէր անձ մ'է, և Լըվրէմ Հերալթի թղթակիցն է. իսկ բողոքական ազգայնոց մէջ էր Միհրան էջ. Պաղտասար Հիւսեանց, որ զեղեցիկ տանաւարանեց միութեան վրայ և բաժակի առաջարկութեան մէջ միայն փորձիկ թերութիւն մը տեղի ունեցաւ, այն է զլիշ շատակութիւն այն ազգ. Յանձնախմբին, որ Կարնոյ ապագային համար այսօր կը գործէ և որոյ մէջ կան նաեւ Կարնոյ աղնական գերդաստաններէն ուսումնական և Հայրենասէր անդամներ:

Մինչ Կարնոյ ազգ. վարչութիւնն 'ի մասին բարենորոգմանց կը յուզուի թուրքերն ալ աւելի կը յուզուին, և առ կայսր. քովսիէրս դիմելով հակառակ վայրին միջամտութեանը՝ դժգոհանք կը յայտնեն տեղական վարչութեան յոռի և զեղծ բոլոր թուրք պաշտօնէիցի դէմ: Իսկ կայսր. քովսիէրը այս միջոցին ալ աւելի կը յուզուին. վասն զի Անգղիոյ ընդհ. հիւպատոսն 'ի Տիգրանակերտ հեռագիր կրնուէր Կ. Պօլսոյ դեպքանտունէն որ, անմիջապէս անագարէ 'ի Կարին կայսր. քովսիէրներուն հետ 'ի պաշտօնէ բարենորոգմանց գործին մէջ մտնելու և թէ այս մասին Բ. Դրան հաւանութիւնն իսկ առնուած է արդէն, բայց հիւպատոսին զարմանքը որչափ մեծ կը լինի, երբ կը լսէ կայսր. քովսիէրներէն թէ իրենք Բ. Դրանն ոչ գրաւոր և ոչ բերանացի հրահանգ առած են, բայց կը յաւելուն թէ հիւպատոսը կրնայ 'ի հարկին իրենց հետ տեսնուելու խորհուրդ տալու և տեղեկութիւն առնելու և կերել թէ կայսր. քովսիէրը միշտ հեռագրով բանակցութեան մէջ են Բ. Դրան հետ: Բայց վերջապէս մայիս 27-ին Բ. Դրան հեռագիր ընդունած են կայսր. քովսիէրը, որ անգղ. հիւպատոսին 'ի պաշտօնէ միայն տեղեկութիւն տան այն ամէն բարենորոգմանց վրայօք, որոս 'ի գործ պիտի դնեն ըստ Պերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածը: Ահա այս կերպով օսմանեան կայսրութիւնը կ'երեւի թէ կը համաձայնի Անգղիոյ դեսպանատան հետ, որոյ առ կերպով զիջանիլը Ռուսիոյ դեսպանատան ազդեցութեան կը արուէ, վասն զի յայտ է թէ երբ Անգղիոյ այդպիսի իրաւունք մը առնու, Ռուսիա չը պիտի մնայ անտարբեր, այլ նոյնը պիտի պահանջէ Դրանէն, այս ամենուն իրարու վրայ

հասնելէն է, որ ցարդ կայսր. քովսիէրը բարենորոգմանց Յանձնաժողովը կազմած էին:

Բայց այս ամենուն վրայ կայ մէկ ուրիշ դժուարութիւն մ'ալ, Բ. Դուք. հրահանգ տուած է իւր քովսիէրներուն, որպէս զի բարենորոգմանց գործին մէջ ազգաց թիւը միայն հիմ բռնուի. մինչդեռ մեծ. Սուլթանը հրովարտելովք և այլ և այլ դաշնագրութեամբ հաւատարմութեան սկզբունքը և անձնական արժանիքը ճանաչած հռչակած է աշխարհի, թուային այս խնդրոց մէջ թուրքեր բնականաբար պիտի շահին, վասն զի քրդերը և ուրիշ վայրենի ցեղեր իրենց թուոյն մէջ առնելով հայերէն կրկնապատիկ թիւ կազմելու կարող են. փոփոխելով միանգամայն շատ մը հայաբնակ գաւառները բոլորովին թրքաբնակ դաւառներու հետ, բաւական է որ կառավարութեան ձեռքն է երկրին աշխարհագրական դիրքը, այս պատճառաւ հոյք մտադիր են բողոքելու և հաւատարմութիւն և անձնական արժանիք միայն ճանաչել պիտի պահանջեն կայսր. քովսիէրներէն: Ռուսաց հիւպատոսն ու պ. Կանաւարական, որք Օլթի գացած էին երէկ վերադարձան 10,000-էն աւելի թուրքեր և քրդեր Օլթին և Կարնէն և Չըլտըքէն գաղթելով հետզհետէ 'ի Կարին կը հասնեն, կառավարութիւնը դուք բնակութեան համար տեղ գտնելու մասին շփոթած է, նայինք, Բ. Դրանն ինչ հրաման կուզայ գաղթականաց համար: Գանի օր յառաջ կայծակէն երեք թուրք ձիով մը սպանուեցան: Քաղաքին Պէլեդիէի ժողովին ընտրութեան մէջ հայք առաւել քուէով յաղթանակ տարին 10-ը անդամներէն 7-ը հայ ընտրուեցան: Գաղղիոյ հիւպատոսն առաջ նորդարան գալով մայիս 31-ին տեսնուեցաւ գեր. Սրբազանի հետ 'ի ներկայութեան գեր. Ս. Վահան վարդապետին: Խուսի և Պալագեանի հայք կը բողոքեն Կարնի և Չըլտըքէն թեքէմէ գաղթականաց դէմ: Գեր. Սրբազան առաջնորդը յատկապէս գրով բողոքեց առ Վալին, որ դուք չը հաստատուին Հայաբնակ գիւղերու մօտ, այլ հեռաւոր տեղեր խրկուին ի բնակութիւն:

Ազգ. վարժարանին մէջ ուր 1000-էն աւելի մանչ ու աղջիկ աղայք կան, կուսանին հայերէն գաղղ. տաճի. տարեք երկրաչափ. և դրահաշուութիւն, թուաբանութիւն. սկզբունք բնագիտութեան և բնական պատմութեան, տարեք մարդակազմ. հայոց և սրբազան պատմութիւն, բարդախօսութիւն, գծագրութիւն, տիեզերագրութիւն, տօմարակալութիւն, աշխարհագրութիւն. որոնց համար տարեկան հաղիւ 3-400 լիւրայի չափ ծախք կըլլան ազգ. սնտուկէն: Իսկ ընկերական վարժարանին մէջ կը յաճախեն 70-80 աղայք և կուսանին հայերէն, գաղղ., տաճի. թուաբանութիւն, տարեք, մարդակազմ, հայոց և սրբազան պատմութիւն, տօմարակալութիւն, որուն 300 լիւրային աւելի տարեկան ծախք կը լինի, զոր կը վճարեն ծառայք:

ՄԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԲԵՐ

—Լօրդերի պալատում լօրդ Բիլինգսթիլը պատմականութիւն Ստրէպէլէնին, ասաց որ Լուի Նապոլէօնին հանդիսաւոր կերպով չեն թաղի: Նա ասաց որ նրա մարմինը ցամաք կը հանեն Շիրնէստում, և այնտեղից թագաւորական հրձիգ գունդը նրան կուղեկցի մինչև Չալլաքեօքտա, և ներկայ կը գտնվի նրա թաղմանը:

—Ալէքսանդրիայից հաղորդում են երազական դանաղան լրագիրներին, որ Եգիպտոսի նախկին խէղիվ խմայիլը և նրա Հասան և Հիւսէյն որդիքը ուսումնական Կ. Պօլսոյ քրտնախան և անդլական նաւերը նրան ճանապարհ ձգեցին, և որ շուտեւ վերադարձան:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

